

և զՄաղտոմայն, որ ստացան զՍուրբ Աւետարանս ևւ եղին ի դուռն Երուսաղեմայ ի յիշատակ իւրեանց հովւոյն...: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄահտառի Գօզայն...» (Սապ. Յուց. տետր, ԺԵ. էջ, 1185. նսև ՄՁ. Ձեռ. թ. 532): Հաւանաբար ասոնց որդին է Մհտ. Գրիգորը՝ որ կը կոչուի «Աբգայլի տղա» և 1655ին, ՄՁ. կը նուիրէ Ձեռ. Շարակնոց մը (թ. 1659) ընդօրինակուած Աւտոնց գիւղին մէջ, 1644ին, Աւետիս գրչի ձեռքով: (Սապ. Յուց. տետր. Ի. էջ 1517):

ԱՅԳԼՄՍԵՀ ՍՐԿ. Մբ. — Կոստանդին կթղ. (1430-39) իր կողմէն Ամիգ կը ղրկէ 1435ին, Մկրտիչ Նաղաշ եպս. ին մօտ, Փլուրենտեան ժողովին մասնակցելու մասին անոր կարծիքը ստանալու համար. Աբղմսն կը բերէ Նաղաշի պատասխանը. (Ազգայն. էջ 2077):

ԱՅՐԱՀԱՄ ԱՅ. Մբ. — Երուսաղէմի Լեռնակոյման (Այն Բեաւրիմ) Հայոց Ս. Յովհաննէս Մկրտիչ վանքին վանահայրը. (ՄՁ. թ. 1662 որ «Աղօթագիրքն» է Վարդան վրդի. Մարաթացոյ, ընդօրինակուած 1466—69ին):

ԱՅՐԱՀԱՄ ԱՅ. Մբ. — Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքին մէջ ընդօրինակած է ՌՃԳ (=1654)ին Գրիգոր վրդ. Ծերենցի Մեկն. Արարածոց աշխատութեան համառօտը, ինչպէս նաև կատարած է Տիրատուր, Գրիգոր վարդապետաց, Որտոնեցիին և Վանականի ճառերուն ընդօրինակութիւնները (էջն. Յուց. թ. 1090, էջ 144):

ԱՅՐԱՀԱՄ ԱՅ. ԲԻԻԶԱՆԴԱՅԻ, Մբ. — 1729ին, Ս. Յակոբայ վանքին մէջ կ'ընդօրինակէ Հաւաքածոյն (ՄՁ. թ. 813) «Թուին Հայոց ՌՃՀԸ (=1729) ամին փութանակի (տարբեր գրով) գրեալ եղև յԱբրահամ իբր յԱբեղայէ Բիւզանդացոյ, ի թաղէն Պալատ կոչեցեալ, որդի առն բարեպաշտի Պետրոսի և Բրաբրիոնի դ. անգամ յԵրուսաղէմ գալողաց...» (Սապ. Յուց. տետր ԼՁ. էջ 2770):

ԱՅՐԱՀԱՄ ԱՅՎԱԶԵԱՆ ՊՈԼՍԵՅԻ, (1846-1909). — Աշակերտ Գուճգարուի Մայր-Վարժարանի, ուսուցիչ Սարբերդ (1865), պարբերաբար հոգաբարձու, թաղական, երեսփոխան. եղբօրը՝ Գէորգի հետ կը հիմնէ 1869ին Մառնոյ երգիծաթերթը. 30 աշակերտներ կը տանի Էջմիածին (1882). բազմիցս այցելած է Ս. Յա-